ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ՄԵՆԱՍՏԱՆՆԵՐԻ ԵՒ ԿՈՒՍԱԿՐՈՆ ԿԱՆԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ Եկեղեցու կուսանաց վանքերի եւ միանձնուհիների վերաբերյալ արժեքավոր աղբյուր են հայկական ձեռագրերի հիշատակարանները: Դրանք ժամանակագրական եւ տեղագրական հետաքրքիր տեղեկություններ են պարունակում ինչպես պատմական Հայաստանում, այնպես եւ Հայաստանից դուրս եղած կուսանաց անապատների մասին, արձանագրում են բազմաթիվ միանձնուհիների անուններ՝ լրացնելով պատմագրական վկայությունները:

Այս ամենի վերաբերյալ բավականաչափ նյութ են պարունակում Ե.-ԺԷ. դարերի ձեռագիր մատյանների հիշատակարանները, որոնք ամփոփված են ականավոր գիտնականներ Լեւոն Խաչիկյանի «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Վազգեն Հակոբյանի ու Աշոտ Հովհաննիսյանի «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ» եւ Արտաշես Մաթեւոսյանի «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե.-ԺԲ. դդ.» գիտական հրատարակությունների հատորյակներում:

Մինչ դրանց անդրադառնալը, նշենք, որ Հայ Եկեղեցու կանանց մենաստանների վերաբերյալ, թերեւս, միակ ու համապարփակ ուսումնասիրության հեղինակը Մխիթարյան միաբան Վարդան Հացունին է[1]: Կուսանաց վանքերի ոչ բավարար ուսումնասիրված լինելու հանգամանքը Հացունին համարել է «մեր պատմութեան բացը»՝ «արդիւնք մեծաւ մասամբ աղբերաց սակաւութեան ու մթութեան»[2]:

Պատմագրական այս բացը Հացունին լրացրել է՝ հենվելով հայ պատմիչների վկայությունների վրա: Ըստ Հացունու՝ Հայ Եկեղեցում կանանց վանքերի առավել ծաղկուն եւ կազմակերպված շրջանը Դ. դարի երկրորդ կեսից մինչեւ Ե. դարն ընկած հատվածն է, որին ժամանակային մեծ թռիչքով հետեւում է ԺԲ. դարը, երբ Հայ Եկեղեցու մաշտոցներում ներմուծվել են անգամ կանանց՝ վանական ձեռնադրության կանոններ եւ ապա ԺԷ. դարը՝ իբրեւ կուսաստանների վերարթնացման նոր ժամանակաշրջան:

Այս նույն ժամանակագրությանը հետեւելով՝ նշենք, որ հրապարակված հիշատակարաններում կուսանաց անապատների ու միանձնուհիների մասին ամենավաղ հիշա-

1 Տե՛ս **Վ. Հացունի**, Կուսաստանք Հայաստանի մէջ. «Բազմավէպ»,1923, յունուար, էջ 12-17, փետրուար, էջ 43-47, մարտ 72-78. Վ. Հացունի, Հայուհին պատմութեան առջեւ, Երեւան, 2007, էջ 122-152:

2 «Բազմավէպ», 1923, յունուար, էջ 12:

տակությունները սկսվում են միայն ԺԲ. դարից: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

1. հիշատակարաններ, որոնցում նշվում են միայն կույսերի անուններ՝ առանց որեւէ կուսանոցի վերաբերյալ հիշատակման[3],

2. հիշատակարաններ, որոնցում արձանագրված են նաեւ կուսանոցների անուններ:

Առաջին խմբի հիշատակարաններում առանձին ուշադրության առարկա են այն անվանումները, որոնք իբրեւ մակդիրներ գործածվում են միանձնուհի կանանց համար:

Այս առումով ԺԲ.-ից մինչեւ ԺԷ. դարերն ընդգրկող ձեռագիր մատյանների հիշատակարաններում ուշագրավ են «կրօնաւոր», «կրօնաւօրեալ կուսն», «հաւատաւոր», «կոյս», «կոյսակրաւն ապաշխարող» կամ պարզապես՝ «ապաշխարող» կանանց անունները: Ըստ Հայկազյան բառարանի՝ բոլոր այս մակդիրները (բացառությամբ միայն «ապաշխարող»-ի, որին կանդրադառնանք ստորեւ), ըստ էության, ենթադրում են միանձնական վիճակ:

Հացունին, ի մի բերելով պատմական աղբյուրներում միանձնուհիներին տրված անվանումները, նշում է. «Իսկ ընդհանուրին սովորական կոչումն է կուսանք, գործածուած շատերէն, եւ քիչ անգամ կոյս, ինչպէս եւ հաւատաւորք, կամ հաւատացեալք, ծագած առաքելական բացատրութենէն՝ որ հաւատք բառով կը սահմանէ նոյն վիճակը, եւ զոր կը կրկնէ Ագաթանգեղոս եւս: Փաւստոս կը զատէ իրարմէ «կուսանք եւ հաւատացեալք» առաջնովն իմանալով անոնց աղջկութեան հանգամանքը կրօնաւորութեան հետ, եւ երկրորդով՝ նոյն կեանքն ընտրող ոչ կուսանքը. եւ յետոյ երկու կոչումները հոմանիշաբար կը զուգէ մի եւ նոյն անձանց վրայ. «զկուսանսն հաւատացեալս»[4]:

Ուշագրավ է նաեւ Վահան վրդ. Բաստամյանցի բացատրությունը: Մխիթար Գոշի «Դատաստանագրք»-ի կանոններից[5] մեկում հանդիպող «հաւատաւոր կանայք» արտահայտությունը Բաստամյանցը ծանոթագրում է հետեւյալ կերպ. «...Հաւատաւոր կանայք կոչվում են վանքի կուսանքը, որք դեռ չեն սարկաւագուհիներ, եւ կամ այն կանայքը, որք հրաժարուելով աշխարհից՝ ապրում են վանքի մէջ իբրեւ աշխատաւորներ, հոգու համար»[6]:

3 Այս խմբի հիշատակարանները հաստատում են Հացունու այն միտքը, թե «երբեմն կը հանդիպինք հաւատաւորաց, որ վանքէ դուրս կը բնակին»: «Բազմավէպ», 1923, փետրուար, էջ 43:

4 «Բազմավէպ»,1923, յունուար, էջ 17:

5 Կանոնը պատվիրում է հետեւյալը. «...Իսկ հաւատաւոր կանայք, եթէ յաշխարհական քահանայէ ձեռնադրի ը) եւ մօտ ի նա իցէ վախճանն թ) նմա լիցի եւ եթէ ի վանք ժ) ձեռնադրի եւ մեռծ ի նոսա վախճանի՝ նոցա լիցի. մի՛ եպիսկոպոսն ազահիցի ժա) ի նոսա»: Տե՛ս «Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք հայոց», իրավաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբ, մաս Ա., Վահան վրդ. Բաստամեանց, Դատաստանագիրք, Վաղարշապատ, 1880, էջ 83:

6 Անդ, էջ 83:

Բաստամյանցի այս բացատրությունը, թերեւս, համեմատության որոշակի եզրեր կարող է ունենալ այսօր եւս Ռուս Ուղղափառ Եկեղեցում գոյություն ունեցող «послушница» կոչվող կանանց հետ: Նրանք եւս վանքի սպասավորներ են, որոնք պատրաստվում են վանական դառնալ: Տե՛ս С. И. Ожегов, Словарь русского языка, Москва, 1986, էջ 491:

Ինչ վերաբերում է Բաստամյանցի մատնանշած՝ աշխարհիկ կյանքից հեռացած ու վանքում բնակվող աշխատավոր կանանց, ապա այս կարգավիճակին առավել համապատասխանում են հիշատակարաններում հանդիպող «վանքի տնտեսուհիները», որոնք, ըստ ամենայնի, ծառայել են արական վանքերում: Այսպես՝ Բաբերդի Անլոց անապատում 1486 թ. ընդօրինակված Աւետարանի հիշատակարանում գրիչը պատվիրում

Այս ամենը թույլ է տալիս պնդելու, որ հիշատակարաններում հանդիպող «կրաւնաւոր», «կրօնաւօրեայ կուսն», «հաւատաւոր», «կոյս», «կոյսակրաւն ապաշխարող» անուններով կանայք եղել են Հայ Եկեղեցու միանձնուհիներ:

Նկատենք, որ նման մակդիրներով հիշատակվող կանանց անուններ հանդիպում են աշխարհագրական ամենատարբեր վայրերում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում, ինչը վկայում է այն մասին, որ հայ եկեղեցական կյանքում միանձնուհիների առկայությունը չի կրել զուտ տեղային բնույթ:

Այսպես՝ Կիլիկյան թագավորության շրջանում, եթե ոչ կուսանոցների[7], ապա կույսերի առկայության մասին է փաստում Ստեփանոս Կաղզվանցու 1289 թվականին ընդօրինակած Աւետարանի հիշատակարանը՝ «յերկիրս Կիլիկիա, ի յանապատիս Ցախոտան Սուրբ Աստուածածինս...»[8]: Հիշատակարանում նկարագրվում են օտար ասպատակների վայրագությունները, որոնց զոհ են դարձել նաեւ կրոնավոր կույսերը. «...Եւ զնազելի փիկնայս եւ զաղախնայս եւ զկրօնաւորեայ կուսանսն՝ զդստերս մեծապանց եւ զաղքատաց հրապարակախաղ առնէին եւ զանբիծ մանկունսն ի գիրկս մարցն սպանանէին...»[9]:

1294 թ. Սկեւռայում գրված «Ներսիսի Լամբրոնացոյ մեկնութիւն սաղմոսաց Դաւթի» ձեռագրի հիշատակարանը, կրկին առանց որեւէ կուսանոցի մասին հիշատակման, վերահաստատում է պատմական մեկ այլ իրողություն՝ Ներսես Լամբրոնացու մոր եւ քույրերի կուսակրոնության ուխտի ընդունման մասին պատմական տեղեկությունները.

«Յիշեցէք բարեաւ զբարի ծնողս սոցին զնախափոխեալն առ Քրիստոս զմեծանունն Աւշին, հանդերձ երէց դստերաւն Մարեամաւ եւ կրտսեր որդեկաւն Գրիգորիւ՝ զի հանգիցեն ի գոգն Աբրահամու, եւ մխիթարեսցին փառաւքն Ղազարու, եւ մայր սոցին **Շահանդուխտ**[10]՝ ամենաբարի եւ ճգնազգեաց այժմ կրաւնաւորեալ ի ձեռաց որդոյ իւրոյ, սուրբ հաւրս՝ երկու դստերաւք **Շուշանաւ եւ Տալիթայիւ**, որք նորին ճգնող շաւղացն հետեւին, զի մխիթարեսցին ի կեանս զաւակաց իւրեանց եւ եղբարց, եւ սոքաւք ընդ նախահանգուցեալս փրկեսցին յիշխանութենէ խաւարի, եւ փոխեսցին յարքայութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի// ի մասն վիճակի սրբոցն, ի լոյսն եւ յարազուարճ խնդութիւնն ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր»[11]:

Մեկ այլ կրոնավոր կնոջ մասին է նշված Կիլիկիայում 1195 թ. Կոստանդին գրչի ընդօրինակած Աւետարանի հիշատակարանում. «Յամսեանն ապրիլի ԻԶ. (26) հան-

---

է հիշել «զՋոհար պնտեսն, որ բազում աշխատութեամբ սպասաւորէր վանացս...»: Տե՛ս «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. 3, Երեւան, 1967, էջ 90:

1470-1477 թթ. մի քանի ձեռագրերում հիշատակվում են Անկյունյաց վանքի պնտեսուհիների անունները. «...յիշեսջիք... եւ զՀերիք մամն, եւ զՄթխալ մամն, ոմն ի ջրին բերել, ոմն ի հացին թխելն, ոմն աւել ածելն...» եւ կամ հիշեցեք «...զպընտեսն՝ զՀերիքն, որ սիրով հոգւոյն նեղացան եւ սպասաւորեցին սուրբ Աւետարանիս եւ հոգ տարան ի թուղթ նշայել, որ ի յաւել ածելն, որն ի ջրին բերելն...»: Տե՛ս «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. 2, Երեւան, 1958, էջ 306, 418:

7 Վ. Հացունին կասկածի տակ է առնում կանանց մենաստանների գոյությունը Կիլիկյան Հայաստանում: Տե՛ս «Բազմավէպ», 1923, մարտ, էջ 72: Հ. Ոսկեանը մատնանշում է նման մի քանի վանքեր: Տե՛ս **Հ. Ոսկեան**, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ 226-228:

8 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դ.», Երեւան, 1984, էջ 629:

9 Անդ, էջ 629:

10 Ընդգծումները մերն են՝ Հ. Մ.:

11 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե.-ԺԲ. դդ.», Երեւան, 1988, էջ 261:

զեաւ ի Քրիստոս մայր սոցին **Մարիամ** կրաւնաւոր՝ամենայն առաքինութեամբ զարդարեալ»[12]:

Ձեռագրերում հանդիպում են նաեւ Երուսաղեմի հավատավոր կանանց մասին հիշատակումներ: Նշենք, որ Հայ Եկեղեցու միանձնուհիների ներկայությունը Երուսաղեմի հայկական վանքերում փառողունակ թեմա է, որին արժե անդրադառնալ առանձին հոդվածով: Առայժմ նյութի առնչությամբ բերենք միայն հիշատակարաններում հանդիպող մի քանի տեղեկություններ:

Առանձնակի ուշագրավ է 1422 թ. Երուսաղեմում գրված «Յայսմաւուրք»-ի հիշատակարանը, որի հեղինակը նշում է նաեւ այն պաշտոնը, որ կատարել են հավատավոր կանայք փերունական սրբավայրում: Ձեռագրի հիշատակարաններից մեկում Թորոս գրիչը «այլ եւս առաւել» խնդրում է հիշել «Աստուածածնին սուրբ գերեզմանին լուսարարացն՝ **Կաֆացի Մարիանեացն**, զի ինձ Թորոս զծողիս հետ բազում աշխատանս կրեցին»: Նույն ձեռագրի մեկ այլ հիշատակարանում գրիչը այս կանանց տալով «հոգեւոր մայր» մակդիրը՝ կրկին խնդրում է աղոթքով հիշել «եւս առաւել իմ հոգեւոր մարցն **Մարանէիցն**, որ բազում աշխատէին ընդ իս...»[13]:

Նշենք, որ Լ. Խաչիկյանը անձնանունների ցանկում «Մարիանեացն» կամ «Մարանէիցն» անունները ներկայացրել է իբրեւ «Մարիան-եայք»-ի հոլովված ձեւեր: Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ «Մարիանեացն» կամ «Մարանէիցն» անունով հիշատակվող կանանց մի խմբի վստահված է եղել չափազանց կարեւոր պաշտոն՝սուրբ Աստվածածնի գերեզմանի լուսարարի պաշտոնը:

1427-ին Երուսաղեմում ընդօրինակված «Մեկնութիւն կաթողիկէից թղթոց»-ի հիշատակարանում կրկին հանդիպում ենք «հաւատաւոր» կնոջ անվան. «Յիշեցէք **զԵղիսաբեղ** հաւատաւորն, որ յոյժ երախտաւոր է մեզ ի սուրբ քաղաքս Երուսաղէմ»[14]:

Կուսակրոն, հավատավոր կանանց անուններ են հանդիպում նաեւ պատմական Հայաստանի վանքերում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում:

1488 թվականին Կուքի վանքում[15] ընդօրինակված Աւետարանի գրիչը խնդրում է աղոթքով հիշել ձեռագրի պատվիրատուին եւ նրա մերձավորներին՝«**Մարիամ** կոյսակրաւն ապաշխարողին, Մէհրիշատին, Ղամաթին, Սիրիթուխտին»[16]:

1603-ին Խուլփում գրված «Մեկնութիւն առակացն Սողոմոնի» ձեռագրի հիշատակարանում գրիչը՝ Միքայել քահանան, հայտնում է, որ կատարել է աշխատանքն «ի խնդրոյ պատուական եւ հեզահոգի, բարեսէր մահդասի կոյսն **Էմիչին**»[17]:

Նույն ձեռագրի մեկ այլ հիշատակարանում կրկին կարդում ենք. «Ջերջանիկ սրա-

12 Անդ, էջ 289:

13 «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1401-1450թթ.)», հ. 1, Երեւան, 1955, էջ 300:

14 Անդ, էջ 371:

15 Վանքը գտնվել է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Շահապոնք գավառում, Նախիջեւանի Քյուքյու գյուղում. տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 3, Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, էջ 297:

16 «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1481-1500 թթ.)», հ. 3, էջ 118:

17 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա., Երեւան, 1974, էջ 85:

ցող սորին զհարսնացեալ կոյսն **զէմիչէն** եւ զընկերակիցն իւր՝ **զՀռիփսիմեայ** կոյսն յիշեսջիք ամենայն արեան մերձեւորաւք...»[18]:

Խուփը գտնվել է Վանա լճից հարավ-արեւմուտք: Տեղանունների բառարանում նշված է միայն գյուղի Ս. Կարապետ եկեղեցին՝ իբրեւ գրչության կենտրոն, որ կողոպտվել ու ավերվել է 1895 թվականին[19]: Մինչդեռ բերված ձեռագրի հիշատակագիրը նշում է, որ այն գրվել է «ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին», «ի հայրապետութեան Աղթամարայ տէր Գրիգորիս կաթողիկոսին...»: Հիշատակված Ս. Աստվածածնի վերաբերյալ տեղանունների բառարանում որեւէ տեղեկություն չկա: Արդյո՞ք այստեղ ժամանակին գործել է նաեւ կուսանաց անապատ, որտեղ ապրել են հիշատակված կույսերը, դժվար է ասել:

1491 թ. Համասրեց[20] կոչվող գյուղաքաղաքում գրիչ Հովհաննեսը աղաչում է հիշել «զհոգեւորն՝ զհաւատաւոր քոյրըն իմ **զԽարամզէն**, որ շատ աշխատանք կրեց ի գրել սուրբ Աւետարանիս...»[21]:

Շուրջ երկու դար անց՝ 1651 թ., Շոշում[22] ընդօրինակված Աւետարանի հիշատակարանի վերջում Վարդեր կամ Վարդխաթուն անվամբ գրչուհին եւս նշում է իր կուսակրոն լինելու հանգամանքը:

«Արդ՝ յերես անկեալ աղաչեմ պառապեալ աղախինիս ձեր, ո՛վ հոգեւոր հարք եւ եղբարք իմ, մանկունք սբ. յեկեղեցոյ, որք հանդիպիք աստուածաշունչ սբ. Աւետարանիս...:

Կատարեալ ձեռամբ աղախնականիս,
Անուամբ կոչեցեալ **Վարդեր** անուանիս,
Գրեցաւ Ռ. եւ Ճ. ի թվականիս,
Ի Շաւշ քաղաքի եւ Ըսպայհանիս:
Դարձեալ աղաչեմ ի հոգայկանիս,
Խոշորութեան գրոյ եւ սխալութեան բանիս,
Անմեղայդիր լինել կարիս եւ ջանիս,
Դեռ նոր եմ ըսկսեալ ի նաւտար բանիս,
Որ չեմ կատարել վարպետութենիս,
Անհաս եւ խակ եմ արուեստարանիս,
Իմ այս էր կատարեալ բանիս:

18 Անդ, էջ 86:

19 Տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, Երեւան, 1988, էջ 828:

20 Տեղանունների բառարանում նման բնակավայրի մասին տեղեկություններ չկան:

21 «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1481-1500 թթ).» հ. 3, էջ 177:

22 Ըստ տեղանունների բառարանի՝ Շոշը ԼՂՀ Ասկերանի շրջանում, Շուշիից մոտ 4 կմ հեռավորությամբ գյուղ է. տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 4, 1998, էջ 163: Մինչդեռ հիշատակարանում նշված Շոշը պետք է որ Սպահանի բնակավայրերից մեկը լինի: Այս մասին են վկայում Նոր Ջուղայում ընդօրինակված մի շարք ձեռագրերի հիշատակարաններ: Մասնավորապես, Կիրակոս երեցը 1651 թ. ընդօրինակված «Մաշտոց»-ի հիշատակարանում նշում է, որ այն գրվել է «ի քաղաքս Ըսպահան, որ կոչի Շօշ, ի գեօղս Ջուղա, ի դուռն Ս. Աստուածածնի...»: Նույնը փաստում է նաեւ Նոր Ջուղայում 1659 թ. ընդօրինակված Աւետարանի հիշատակագիրը՝ գրելով. «...ի տեառնաշէն եւ աստուածապահ գեօղաքաղաքն Նոր Ջուղա, մերձ յարքայանիստ քաղաքին Ըսպահանայ, ըստ գրոց Շօշ կոչեցեալ...». տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի, հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 351 եւ էջ 878:

Արդ՝ գրեցաւ ասրուածայշունչ սբ. Աւետարանս ձեռամբ կուսայկրաւն աղախնոււ **Վարդխաթունիս**, յիշապակ ծնողաց իմոց եւ յամենայն յարեան մերձաւորաց իմոց...»[23]:

Իրեն «կոյս» անունով է կոչում նաեւ Ղարադաղի գերությունից ազատված եւ ապա Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքին (վայրն անորոշ է) նվիրաբերված Աւետարանի հիշատակագիրը՝ Վառվառա գրչուհին. «Գրեցաւ ձեռամբ յիշատակարանս բազմավեհ մեղօք լցեալ կոյս անուանեալ **Վառվառէս,** որ միայն անուն [ուն]իմ եւ ոչ գործ»[24]:

1653 թվականին ընդօրինակված «Ժամագիրք, Սաղմոսարան, Տօնացոյց» ձեռագրի հիշատակարանում կրկին հանդիպում ենք կույսի անվան. «Ո՛վ ընթերձողք, յորժամ ընթեռնուք զապենագիրս, յիշեցէք զեղկելի եւ զչնչին **Ռւսփիանէ** կոյս...»[25] :

Ինչպես վերը նշեցինք, հիշատակարաններում հանդիպում են նաեւ «ապաշխարող» մակդիրով կանանց անուններ: Ըստ Հայկազյան բառարանի «ապաշխարող» բառն իր բառիմաստով հոմանիշ չէ միանձնուհի կանանց տրված տարբեր անվանումներին եւ բացատրվում է. «Որք կան ընդ կանոնաւ ապաշխարութեան»[26]: Նույն բառարանում, սակայն, «ապաշխարութիւն» բառի բացատրություններից մեկը՝ «...յանձնառութիւն կամաւոր ճգանց»[27], թույլ է տալիս ենթադրելու, որ «ապաշխարող» կոչված կանայք եւս, առանձին դեպքերում, կարող էին լինել ինքնակամ ապաշխարողներ, այսինքն՝ աշխարհիկ կյանքից հեռացածներ կամ որ նույնն է՝ «հավատաւոր» կամ «կրոնավոր»[28]:

Այս մասին են հուշում նաեւ գրական մի քանի աղբյուրներ, ինչպես եւ՝ հիշատակարանների ներքին բովանդակությունը:

Այսպես՝ «Արարատ» ամսագրում տպագրված «Դիտողութիւն Յ. Ա. Ք. Օրբելոյ աշխատասիրած «Եկեղեցական» պատմութեան վերայ. տպած Թիֆլիզում 1871 ամի» ընդդիմախոսության հեղինակը, մերժելով ձեռնադրված սարկավագուհիների մասին Հ. Օրբելու գրառումը եկեղեցում սպասավորող կանանց մասին՝ գրում է. «...Այսպիսի կանայք Հայաստանեայց Եկեղեցին ունի աւանդութեամբ, որք կոչւում են Թիֆլիզու բարբառով ապաշխարող, սոցա գործն է (որպէս առաքելական դարում) աւելել եկեղեցին, պահել հիւանդները, պատրաստել կին մեռելը, մերկացնել մկրտութեան ժամանակ հասակաւոր կանայքը, եւ եկեղեցւոյ ողորմութիւնը տանել այրի եւ աղքատ կանանց համար»[29]:

Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհին» վեպում եւս «ապաշխարող» անունն է տրվում գրքի՝ աշխարհիկ կյանքից հեռացած հերոսուհուն՝ քույր Աննային: «...Ես ճանա-

23 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 465:

24 Անդ, էջ 254:

25 Անդ, էջ 555:

26 «Նոր բառագիրք Հայկազեան լեզուի», հ. 2, Երեւան, 1981, էջ 272:

27 Անդ:

28 Ղեւոնդ Ալիշանը եւս նման կարծիք է հայտնել: «Յոյժ անպիտան կրօնս ապաշխարութեան, եւ պգէտ եմ խիստ գրչարհեստութեան»,- Շոռոթի կուսանաց անապատի գրչուհիներից մեկի այս տողերի վերաբերյալ Ալիշանը գրում է. «...Երեւի յապաշխարող կանանց դասու էր լինել, բայց ոչ որպէս մեղադիր լինի անձին՝ խիստ պգէտ գրչարհեստութեան եւ ի շարաբանութեան, այլ եւ չափաւոր գիտուն, եւ պարծելի առ հաւատչեայ բարգաւաճանաց ընդ կրօնական կարգաց նա եւ դպրութեան՝ ի կուսական Անապատս անդ Սիւնեաց, մրցողաց ընդ Անապատս Արանց եւ Հարանց, որոց ցանկալի էր առաւելագոյն ծանօթութիւն». տե՛ս «Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի ի Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշան», Վենետիկ, 1893, էջ 354:

29 «Արարատ» ամսագիր, Էջմիածին, 1871, նոյեմբեր, էջ 367-368:

պարհվեցա դեպի այս գյուղը՝ ընկերակցությամբ մի գյուղացու, որ առաջին անգամ հանդիպելուց՝ ինձ ճանաչեց իբրև միանձնուհի, կամ ինչպես ինքն էր ասում՝ «ապաշխարող»[30],- իր մասին պատմում է Մուրացանի «խորհրդավոր միանձնուհին»: Նկատենք, որ վեպի գործողությունների վայրն այս անգամ Սյունիքն է:

Ենթադրությունը, որ առանձին դեպքերում միանձնուհիներին կոչել են նաև «ապաշխարող», ինչպես վերը նշվեց, վկայում են նաև մի շարք հիշատակարաններ:

Այսպես՝ 1647 թվականին Խանածախում Մարիամ գրչուհու ընդօրինակած «Յիսուս որդի» ձեռագրի հիշատակարանում պատվիրատուն՝ Մարկոս եպիսկոպոսը, հայտնում է գրչուհու հետ իր ազգակցական կապի մասին և նշում, որ նրան կոչում են «ապաշխարող». «Արդ՝ ես Մարկոս եպիսկոպոս ըստացի զՅիսուս որդիս, գրել տուի ձեռամբ եղբօր դստերն իմոյ՝ **Մարիամին** եւ փծուն գրչի, որ ապաշխարող կոչի: ...Գրեցաւ զսայ ի յերկիրս Քաշթաղու, ի գուղս Խանածախ, ընդ հովանեաւ Ամէնափրկչիս...»[31]:

Ավելի վաղ՝ 1456 թ. Ջուղայում ընդօրինակված «Քարոզգիրք Գրիգորի Տաթեւացւոյ» ձեռագրի հիշատակարանում գրչուհին ևս իրեն «ապաշխարող» անունն է տալիս. «Յիշեա Քրիստոս աստուած զանպիտան գծողս **Մարիամ** ապաշխարողս, եւ ծնօղս իմ զ[հ]ոգևոր եւ զմարմնաւորսն, եւ զամենայն երախտաւորսն իմ. եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն»[32]:

1457 թ. գրված ձեռագիր Ավետարանի հիշատակարանում նշված են երկու «ապաշխարող» կանանց անուններ. «Մեք մեղուցեալ եւ անարժանք աղախին եւ ծառայք սուրբ Աստուածածնին՝ ապաշխարողքս՝ **Ջանջան եւ Մանան**, ոչ ունելով զաւակ եւ յիշատակ յերկրի, մեծ յուսով ստացաք զսուրբ Աւետարանս ի փրկութիւն եւ ի յիշատակ հոգոց մերոց: Վասն որոյ ի ծունկս անկեալ ողորմելի անձամբ խնդրեմք ի սուրբ քահանայիցդ, որք կարդայք եւ յուսաւորիք սովաւ, յիշեցէք զիս՝ պառապեալ եւ զմեղաւոր ծառայս՝ **զՋանջանս**»[33]:

Հիշատակարանի հետագա շարադրանքում նշվում է **Ջանջան** ապաշխարողի որդու՝ Մարտիրոս քահանայի անունը, «որ ի յանաւրինաց սրով կատարեցաւ»: Թերևս, սա խոսել է տալիս նաև «ապաշխարող» այս կնոջ աշխարհիկ կյանքից հեռանալու շարժառիթների մասին:

Ուշագրավ է նաև, որ հաճախ հիշատակարաններում «ապաշխարող» բառը զուգակցվում է «կույս» կամ «հաւատաւոր» անվանումների հետ:

1493 թ. Այրիվանքում ընդօրինակված Ավետարանի գրիչը հիշատակարանում նշում է, որ գիրքն ընդօրինակել է հավատավոր և ապաշխարող Համանգյուլի պատվերով. «Յանկացող սուրբ Աւետարանիս ոմն ի կանանց **Համանգյուլ** անուն հաւատաւոր եւ ապաշխարող...»[34]:

1497 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակագիրը նշում է, որ ձեռագիրը գրել

30 **Մուրացան,** Խորհրդավոր միանձնուհին, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1975, էջ 211:

31 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.)», հ. 3, էջ 256:

32 «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. (1451-1480 թթ.)» հ. 2, Երևան, 1958, էջ 64:

33 Անդ, էջ 96:

34 «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1481-1500թթ.)», հ. 3, էջ 194:

է ի հիշատակ ծնողների, եղբայրների եւ «կուսանաց ապաշխարողացն **Աննա-Խաթունին,** եւ **Ոսկիկին, Ճահաթունին, Կուլումին**...»[35]: Ձեռագիրը գրվել է «ի յերկիրս Կողմանս Եւդոկիայ, ի գիւղն [Կո]մանայ, ի դուռն [կ]ենսապու սուրբ Նշանին եւ լուսաբո[րբ] սուրբ գերեզմանացն»[36]:

1657-ին գրված «Ժողովածու»-ի Վարդենի անվամբ գրչուհին նույնպես իրեն կոչում է «կոյս եւ ապաշխարօղ». «Փառք..., որ ետ կարողութիւն փկար անձինս կոյս եւ ապաշխարօղ անուն **Վարդենի**, հասանել յաւարտ սբ. գրոցս ի թվին Ռ.Ճ. եւ Զ.-երորդումն»[37]:

1649 թ. ընդօրինակված «Մաշտոց»-ի տարբեր հիշատակարաններում (գրության վայրն անորոշ է) նշված է ձեռագրի պատվիրատուի՝ կուսակրոն եւ ապաշխարող Գայանեի անունը: Նրա անունը կրկնվում է ձեռագրի տարբեր հիշատակարաններում: «Յիշեցէք [մաքր]ափայլ եւ յերկնաթռիչ սբ. յաղօթս ձեր, զսրբրամիտ եւ ճգնազգեստ, հեզահոգի եւ բարեմիտ... զապաշխարող **Գայիանէ**...: Դարձեալ մանաւանդ յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր ըզկոյսն Գայիանէ զապաշխարողն եւ զեղբայրն իւր՝ զքաջ եւ բարունի, զսրբասընեալ կոյսակրօն եւ քաջ քարոզող...»[38]: Նույն էջում կարդում ենք. «Քրիստոս Աստուած քո առատ ողորմութեամբն յիշեա զկոյսակ[ր]օն ապաշխարող Գայիանի հոգին, որ բազում աղաչանօք ետ գրել զսա՝ ծաղկաքաղ աստուածային բիւրասպանիցն»:

Ձեռագրի հիշատակարաններից մեկը հետաքրքիր է նրանով, որ այստեղ նշվում են Գայանե կույսի ավազանի, թերեւս նաեւ՝ ձեռնադրության անունները. «Դարձեալ յիշեցէք ըստացող սբ. գրոյս զկոյսակրօ[ն] /// Քրիստոսի հարսնացեալ զսրբամիտ **Թամ[ամ]**, աւազանին անունն **Գայիանայ** է, եւ մեք **Թամամ** կու ասեմք...: Արդ՝ ես **Թամամս** եւ Բաղդասարս այս Մաշտոցս տուինք ի ձեռն տէր Գրիգորին, որ է ըսպասաւոր Ս. Աստուածածնին, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին, ի թվին ՌՂԸ.»[39]:

Այլեւս կանգ չառնելով հիշատակարաններում հանդիպող «ապաշխարող» կանանց անունների վրա, հավելենք, որ առանձին ուսումնասիրության նյութ կարող է լինել նաեւ հիշատակարաններում առավել հաճախ հանդիպող «հոգեւոր քույր», «հոգեւոր մայր» եզրույթների պարզաբանումը: Նշենք միայն, որ այստեղ եւս, եթե ոչ հասպատապես, ապա որոշ դեպքերում «հոգեւոր քույր», «հոգեւոր մայր» մակդիրները ենթադրել են տալիս այդպիսի կանանց «միանձնուհի» լինելու հանգամանքը: Այսպես, 1655-ին ընդօրինակված «Ժամագրք»-ի հիշատակարանում նույն կնոջ անվան կողքին միաժամանակ գործածվում են եւ «կուսակրոն ապաշխարող», եւ «հոգեւոր քույր» մակդիրները:

«Եւ Քրիստոս Աստուած, քո առատ ողորմութեամբն յիշեա զկու[ս]ակրօն ապաշխարող **Խանումի** հոգին, որ բազում աղաչանօք ետ գրել զսայ՝ ծաղկաքաղ աստուածային բիւրասպանիցն, որ կոչի Ժամագիրք, յիշատակ իւրն եւ ծնողաց իւրոց:

35 Անդ, էջ 473:

36 Կոմանա բնակավայրը գտնվել է Եւդոկիայից ոչ շատ հեռու. տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 3, էջ 201:

37 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.)», հ. 3, էջ 760:

38 Անդ, էջ 351:

39 Անդ, էջ 352:

Գրեցաւ անարժանից պիտակ անուն **սրջսրջի**[40], վասն խնդրոյ զհոգեւոր քերն իմոյ՝ **Խանումին**»[41]:

Հավելումն նշենք, որ ուշադրության արժանի է նաեւ հիշատակարաններում հանդիպող «վարպետ» անվանումը, որը նույնպես հանդիպում է միանձնուհի կանանց անունների կողքին: Ենթադրելի է, որ այս անվանումը տրվել է այն միանձնուհիներին, որոնց մոտ աշակերտել են նորընծա կույսերը:

Ասվածի մասին վկայում է արդեն իսկ այս հոդվածում հիշատակված «Մեկնութիւն առակացն Սողոմոնի» ձեռագիրը (գրչության վայրը՝ Խուփ), որի հիշատակագիրը պատվիրում է հիշել «...իւր հոգեւոր մօրն՝ Ղարիպ խաթունին եւ Մախթումին, եւ Շահամիրին, եւ Մարգարտին, եւ Էմիջին, իւր վարպետ **Հռիպսիմին**, իւր հոգեւոր դստերն՝ **Հռիպսիմեայ** կուսին...»[42]:

«...Յիշեցէք ի Քրիստոս զանարժան մեղաւոր Եմիչէն եւ զիմ շնորհիալ բազմաշնորհ, աստուածասէր եւ ողորմած վարպետ **Հռիփսիմէն**, որ բազում աշխատանք ունի ի վերայ [մեր], իւր աշխատանաց փոխարէն Քրիստոս... /// անէ զիւր երկնային արքայութիւն. ամէն»[43]:

1650-ին Կատարինե գրչուհու ընդօրինակած Աւետարանի հիշատակարանում եւս հանդիպում է «վարպետ» անվանումը: Հիշատակագիրը խնդրում է հիշել «...զմայրագութ եւ սննդամայրն վարպետն իմ՝ **զՄարիամ** կուսանուհի, զոր սնոյց զիս եւ կարդացոյց բազում աշխատութեամբ եւ յետ իւրոյ աշխատութեանն ետ զիս ի ձեռն տէր Աստուածատուր քահանային վասն շարականի եւ գիր ուսուցանելոյ, որ էր խոստովանահայր անապատին Շէնհերու, զոր եւ ուսոյց զիս իբրեւ զմայր մանկան իւրո[յ] բազում, բազում աշխատանաւք, զոր եւ տէր Աստուածն ամենայնի ինքն հատուսցէ զվարձս աշ[խ]ատանաց իւրոց հայրախնամ քաղցրիկ տէր տէրն իմ զտէր Աստուածատուր քահանայն, որ է նա բնիկ երկրէն Վանա[յ] եւ **Մարիամ** վարպետն էր երկրէն Նախջավանու ի գօղն որ կոչի Դարաշամբ»[44]:

Նշենք նաեւ, որ «վարպետ» անունը հանդիպում է գեղարվեստական գրականության մեջ՝ իբրեւ մակդիր միանձնական կյանքին նվիրված կանանց համար: Պերճ Պռոշյանի «Շահեն» վիպակի հերոսուհու մասին կարդում ենք. «...Աղջիկն հայտնեց յուր հորն յուր կուսական ուխտը, որից հետո հայրն ստիպվեց սեւ շոր հագցնել նրան եւ վարպետ անվանել»[45]:

40 Վազգեն Հակոբյանն այս անունը ծանոթագրում է հետեւյալ կերպ. «Մատենադարանի ձեռագրաց Ցուցակ կազմողները կարդացել են Միքայել (հ. Ա., էջ 356): Այս սկզբունքով կարդալու դեպքում կստանանք ոչ թե Միքայել, այլ Միքմիքի»: Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 645:

41 Անդ, էջ 645:

42 «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620թթ.)», հ. 1, Երեւան, 1974, էջ 85:

43 Անդ, էջ 87:

44 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 627:

45 **Պ. Պռոշյան**, Երկերի ժողովածու, հ. 3, Երեւան, 1979, էջ 130: